2.— Առաջին եկեղեցին որ չինուած է Նազարէթի մէջ Աւետման Եկեղեցին է՝ կառուցուած Ս. Աստուածածնի տան տեղւոյն վրայ։ Եպիփան երբ Տիբերիացի Կոմս Ցովսեպոսի վրայ տեղեկութիւն կու տայ, հետևեալ կերպով կը գրէ. «ան կայսերական հրաման մը ընդունեց Հրէից քաղաքներու և աւաններու մէջ եկեղեցիներ չինելու։ Ոչ մէկը կրնար եկեղեցի չինել նոյն տեղերը, վասն զի անոնց մէջ չէին գտնուեր ո՛չ յոյն, ո՛չ սամարացի և ո՛չ ալ քրիստոնեայ. մանաւանդ Տիբերիայի, Դիոկեսարիոյ՝ որ է Սեֆորիս, Նազարէթի և Կափառնաումի մէջ ուրիշ ազգէ մէկը չկար (Patr. Gr. Հտր. ԽԱ.)»։ Որչափ որ, ըստ Եպիփանի, Հրեայք Նազարէթի և յիշեալ քաղաքներուն մէջ բազմաթիւ էին և քրիստոնեայք չէին կրնար հոն բնակիլ, բայց սա չի նշանակեր թէ վերջիններս բոլորովին յարաբերութենէ դադրած էին, ընդհակառակն անոնք կ'այցելէին Նազարէթի տնօրինական տեղերը և կը պահպանէին զանոնք։ Որքան որ դժուարութիւններ ըլլային Հրէից կողմէն՝ այսու հանդերձ 359ին Կոմս Ցովսեպոս յաջողած էր պետական օգնութեամբ կառուցանել Նազարէթի եկեղեցին, ինչպէս Սկիւթոպոլսի մէջ ան պատմած էր Եպիփանին։ Նազարէթի եկեղեցիներու մասին պիտի տանք միայն քանի մը վկայութիւններ։ 670ին Արգուլֆ եպիսկոպոս Նազարէթ այցելած էր և ծանօթագրած էր թէ «Նազարէթ քաղաքը Կափառնաումի նման պարիսպ չունէր, չինուած էր լերան մը վրայ։ Սակայն ունէր քարաշէն մեծ շէնքեր. հոն կը գտնուին երկու մեծ եկեղեցիներ, մին քաղաքին մէջ, որ կը կենար երկու կամարներու վրայ, և ուր երբեմն կը գտնուէր այն տունը որուն մէջ մեր Փրկիչը ապրեցաւ։ Այս եկեղեցին կամարներով միացած սիւներու վրայ կը կենար, իր ստորին մասին մէջ նոյն սիւներուն տակ կը գտնուէր ականակիտ աղբիւր մը, բոլոր ժողովուրդը հոս կը յաճախէ ջուր առնելու համար։ Միւս եկեղեցին չինուած է այն տան տեղւոյն վրայ որուն մէջ Գաբրիէլ հրեշտակապետը միայնակ գտաւ Ս. Կոյսը և անոր տուաւ աւետիսը»։ Միևնոյն վկայութիւնը կը կրկնեն 720ին Պիտա, և 1137ին Քասսին լերան Պետրոս վանականը։ Տիւրացի Կիյեոմ կը գրէ թէ «Թանկրէտ Գալիլիոյ իշխան կարգուելով՝ մեծ խնամքով հիմնարկեց այս գաւառին եկեղեցիները և օժտեց զանոնք մեծամեծ կալուածներով, մասնաւորապէս Նազարէթի և Թաբորի եկեղեցիները» (Տե՛ս Recueil des Historiens des